

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ

Ներածություն

Հաշվետու ժամանակաշրջանում «Հայաստանի Հանրապետության պետական կառավարման սկադեմիա» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Ակադեմիա) իր գործունեությունը իրականացրել է ՀՀ օրենսդրությանը, Ակադեմիայի կանոնադրությանը համապատասխան:

Ակադեմիայի գործունեության հիմնական ուղղություններն են՝ մասնագետների վերապատրաստումը, որակավորման բարձրացումը, լրացուցիչ, բարձրագույն մասնագիտական (մագիստրատուրա) և հետբուհական կրթական ծրագրերի իրականացումը, պետական կառավարման ոլորտում գիտական հիմնարար և կիրառական հետազոտությունների, փորձագիտական արժևորումների, ինչպես նաև խորհրդատվությունների իրականացումը, պետական կառավարման ոլորտում միջազգային գիտակրթական համագործակցությունը, պետական կառավարման ոլորտում տեղեկատվավերլուծական նյութերի ապահովումը:

Կրթական բարեփոխումների զարգացման փուլում շեշտը դնելով ՀՀ հանրային ծառայության համակարգի համար ժամանակակից հասարակության և տնտեսության պահանջներին համապատասխանող մրցունակ, բարձրորակ մասնագետների պատրաստման խնդիրների նկատմամբ նոր մոտեցումների վրա՝ Ակադեմիան միջազգային կրթահամակարգում տեղի ունեցող գործընթացներին համընթաց լուրջ քայլեր է անում վերապատրաստումների արդյունքում բարձրացնելու հանրային ծառայողների աշխատանքի արդյունավետությունը, համակարգի առաջանցիկ զարգացումն ու միջազգային ասպարեզում նրա մրցունակությունը:

Ակադեմիայում իրականացվող բարեփոխումների արդյունավետությունը ապահովելու և տարբեր մակարդակներում իրականացվող ծրագրերի համադասման նպատակով առաջարկվում է ընդունել Ակադեմիայի ռազմավարական ծրագիր, որը առաջիկա 5 տարիների համար կսահմանի Ակադեմիայի գերակայություններն ու ռազմավարությունը, զարգացման նպատակային ցուցանիշներն ու համապատասխան միջոցառումների ժամանակացույցը:

Հաշվետու ժամանակահատվածում Ակադեմիայի գործունեության ամփոփ վերլուծության արդյունքներով կարելի է եզրահանգել, որ ընդհանուր առմամբ Ակադեմիային հաջողվել է իրագործել 2011 թվականի համար նախանշված ծրագրային խնդիրները:

Հաշվետվությունը ներկայացվում է ըստ գործունեության ուղղությունների ու առանձին ստորաբաժանումների:

Ակադեմիայի ամբիոնները

Ակադեմիայի ամբիոնները որպես Ակադեմիայի կառուցվածքային ստորաբաժանումներ, իրենց աշխատանքները կազմակերպում և իրականացնում են Ակադեմիայի կողմից նախապես մշակված և հաստատված ուսումնական պլանների և ուսումնական գործընթացի ժամանակացույցի համապատասխան:

Ակադեմիայի ամբիոնները հաշվետու ժամանակահատվածում իրականացրել են հետևյալ աշխատանքները՝

1. կրեդիտային համակարգով կազմել են 2011/2012 ուսումնական տարվա առարկայական ծրագրերը:

Բոլոնիայի հռչակագրի գործընթացին համահունչ գործող ուսումնական պլաններում կատարվել անհրաժեշտ բարեփոխումներ, ինչի արդյունքում կրեդիտային համակարգով կազմվել և վերանայվել են մի շարք առարկաների ծրագրեր:

2. Պատրաստել են 2011/2012 ուսումնական տարվա առկա և հեռակա ուսուցման ուսումնական պլանները: Ուսումնական պլանների քննարկման և հաստատման հիմքում ընկած է ժամանակակից պահանջներին և միջազգային մոտեցումներին համապատասխանեցնելու խնդիրը:

3. քննարկել և ատեստավորել են առկա և հեռակա ուսուցման ասպիրանտների, ինչպես նաև հայցորդների կատարած աշխատանքներ,

4. ամբիոնների նիստերում քննարկել են մագիստրատուրայի առկա և հեռակա ուսուցման մագիստրոսական ատենախոսության թեմաները, նշանակել են գիտական ղեկավարներ,

5. մշակել են համապատասխան կրթական ծրագրեր՝ ուղղված կարողությունների (կոմպետենցիաների) զարգացմանը: Կրթական ծրագրերը համաձայնեցվել են ՀՀ կրթության և գիտության նախարարության հետ:

6. Մշակել են 2011-2012 ուսումնական տարվա քննական և ստուգարքային հարցաշարերը, քննական տոմսերը, առարկայական ծրագրերը, դասախոսների բեռնվածքը,

7. պատրաստել և ամբիոնների նիստերում քննարկել են առկա և հեռակա ուսուցման մագիստրանտների պետական քննությունների ընթացակարգը և նորացված հարցաշարերը,

8. մատուցել և իրականացրել են խորհրդատվություն 2011-2012 ուսումնական տարվա առկա և հեռակա ուսուցման դիմորդների համար, կազմակերպել PR ակցիաներ,

9. կազմակերպել են դասալսումներ, քննարկել դասալսման արդյունքները և ներկայացրել որոշակի գնահատականներ:

10. Ակադեմիան, որպես առաջատար կազմակերպություն, ամբիոնների միջոցով կարծիք է ներկայացրել դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների վերաբերյալ:

11. Ամբիոնների նիստերում քննարկվել են՝

- թեկնածուական ատենախոսությունների թեմաների և դրանց գիտական ղեկավարների առաջադրման կամ դրանց փոփոխման հետ կապված հարցեր,
- թեկնածուական ատենախոսությունների, դասավանդող դասախոսների ծանրաբեռնվածությունների, հարցաշարերի և առարկայական ծրագրերի հարցեր,
- մագիստրոսական ատենախոսությունների թեմաները, պետական քննական հարցաշարերը և կրեդիտային համակարգի ներդրման հետ կապված անհրաժեշտ ուղեցույցներն ու մեթոդական ցուցումները և այլն:

12. Գիտական հոդվածների ղեկավարում և հրատարակում.

Ակադեմիայի «Հանրային կառավարում» գիտական հանդեսում տպագրվելու համար ամբիոնների կողմից քննարկվել է թվով 40 հոդվածներ:

Գիտահետազոտական աշխատանքներ

Հստակեցվել են Ակադեմիայի **Կառավարման հոգեբանության ամբիոնի** գիտական հետազոտությունների անցկացման ուղղությունները: Դրանք են՝ մասնագիտական հոգեբանական ընտրություն, մասնագիտական կողմնորոշում, մասնագիտական պատրաստում:

Կառավարման հոգեբանության ամբիոնի կողմից կազմվել, վերլուծվել և մշակվել է հոգեբանական թեստերի փաթեթ, թեստավորվել են առաջին կուրսի մագիստրանտները (ըստ ցանկության):

Գիտահետազոտական աշխատանքներում ներգրավված են Ակադեմիայի հոգեբանություն (կառավարման հոգեբանություն) մասնագիտությամբ առաջին կուրսի մագիստրանտները, որոնք կատարել են թեստերի առաջին փուլի մշակումը:

Ակադեմիայի հոգեբանություն (կառավարման հոգեբանություն) մասնագիտությամբ առաջին կուրսի մագիստրանտները անցել են համապատասխան ուսուցում Երևանի պետական համալսարանի անձի և մասնագիտական գործունեության գիտահետազոտական լաբորատորիայում:

Կառավարման հոգեբանության ամբիոնի կողմից առաջարկվել և մշակվել են համապատասխան ծրագրեր, որոնց իրագործման արդյունքում հնարավոր կլինի կազմել հանրային ծառայողների հոգեբանական դիմանկարը՝ բացահայտելով նրանց անհրաժեշտ հոգեբանական հատկությունները և որակները:

Մշակվել են համապատասխան ծրագրեր մագիստրանտներին, աշխատակիցներին և բնակչությանը հոգեբանական ծառայություն մատուցելու ուղղությամբ:

Աղյուսակ 1. 2011 թվականին կատարված գիտական աշխատանքների քանակն ըստ ամբիոնների¹

N	ԱՍԲԻՈՆԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՄԹԵՆ-ՄԹԵՆ ԴՊԵՆՍ	ՑՈՒՎԱԾ	ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ, ԳԻՐՔ	ՔԻՎԵՐՈՒՄ
1.	Հանրային կառավարման և հանրային ֆինանսների	2	3		
2.	Իրավունքի և օրենսդրական գործընթացի		5		1
3.	Քաղաքական կառավարման և քաղաքական վերլուծության	2	20	1	4
4.	Կառավարման հոգեբանության	3	15		
5.	Լեզուների և ինֆորմացիոն տեխնոլոգիաների	-	-	-	-
Ընդամենը		7	43	1	5

Ակադեմիայի ուսումնասնաթողական վարչությունը հաշվետու ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ աշխատանքները՝

¹ Մեթոդական ուղեցույցների, մենագրությունների և դասագրքերի ցանկը ներկայացված է հավելվածում:

- ✓ մագիստրատուրայի ուսումնական պլանների ու առարկայական ծրագրերի մշակման գործընթացի կազմակերպում և կատարման վերահսկում,
- ✓ ամբիոնային ծանրաբեռնվածությունների կատարման վերահսկում,
- ✓ ամբիոններին մեթոդական օգնության ցուցաբերում,
- ✓ պրոֆեսորադասախոսական կազմի դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ հարցման կազմակերպում,
- ✓ պետական քննական հանձնաժողովների աշխատանքների կազմակերպում,
- ✓ ուսանողների ավարտական փաստաթղթերի նախապատրաստում և հաշվառում,
- ✓ ընթացիկ քննությունների կազմակերպում և վերահսկում,
- ✓ ուսումնական գործընթացի փաստաթղթային գործավարության ապահովում և վերահսկում,
- ✓ ուսումնական գործընթացի ժամանակացույցի և դասատախտակների կազմում, դասերի կայացման ապահովում,
- ✓ կառավարչական և գիտահետազոտական պրակտիկաների կազմակերպում և վերահսկում,
- ✓ ուսումնական գործընթացին վերաբերող տեղեկատվական-վիճակագրական տվյալների նախապատրաստում,
- ✓ Ակադեմիայի լրիվ և մասնակի ուսանողական նպաստների, պետական կրթաթոշակների հատկացման գործընթացի կազմակերպում,
- ✓ ուսանողների՝ ազատման, հեռացման և վերականգնման վերաբերյալ փաստաթղթերի ձևակերպում,
- ✓ ուսանողների տվյալների հենքի ստեղծում և պահպանում,
- ✓ ստուգաքային և քննական տեղեկագրերի տվյալների մուտքագրման և մշակման գործընթացի կազմակերպում,
- ✓ կիսամյակային և տարեկան հաշվետվությունների ներկայացում և այլն:

Կրթության որակի բարելավման նպատակով հետևողական աշխատանքները շարունակվեցին պրոֆեսորադասախոսական կազմի ձևավորման, նրանց աշխատածավալների օպտիմալացման, ինչպես նաև լսարանային ժամերի արդյունավետ օգտագործման և դասերի անխափան իրականացման ուղղությամբ:


Վերոհիշյալ աշխատանքները պահանջում են անընդհատ հետևողականություն՝ լսարանային ֆոնդի օգտագործման, դասատախտակների ստուգման, հիմնական և համատեղող պրոֆեսորադասախոսական կազմի փաստաթղթերի ձևակերպման, կատարողականների վերահսկման, ուսումնական գործընթացի հսկման, ուսանողների և դասախոսների բացակայությունների գրանցման և ամփոփման առումով:

Հաշվետու ժամանակահատվածում մշակվել է Ակադեմիայի ուսանողական նպաստների, պետական կրթաթոշակների տրամադրման կարգը՝ առաջադիմության հանդեպ առավել խիստ պահանջներով:

Աղյուսակ 2. 2009-2012թթ. ընդունելության ցուցանիշները

Ուսուցման ձևը	2009-2010 ուսումնական տարի	2010-2011 ուսումնական տարի	2011-2012 ուսումնական տարի
Առկա	101	78	105
Հեռակա	101	106	108
Ընդհանուր	202	184	213


Նկար 1. 2009-2012թթ. ընդունելության ցուցանիշները



Աղյուսակ 3. Ակադեմիայի ուսանողների թվաքանակն՝ ըստ ուսուցման համակարգերի (2009-2012թթ.)

Ուսուցման ձևը	2009-2010 ուսումնական տարի	2010-2011 ուսումնական տարի	2011-2012 ուսումնական տարի
Առկա	189	165	178
Հեռակա	271	283	284
Ընդհանուր	460	448	462

Նկար 2. Ակադեմիայի ուսանողների թվաքանակն՝ ըստ ուսուցման համակարգերի (2009-2012թթ.)




Ըստ մասնագիտությունների՝ ուսանողների թվի բաշխվածությունը ներկայացված է 4-րդ աղյուսակում և 3-րդ, 4-րդ, 5-րդ նկարներում:


Աղյուսակ 4. Ակադեմիայի ուսանողների թվաքանակն՝ ըստ մասնագիտությունների

Մասնագիտություն	Ուսուցման ձևեր		Ընդհանուր
	Առկա	Հեռակա	
Հանրային կառավարում	94	118	212
Կառավարում (Հանրային ֆինանսների կառավարում)	44	44	88
Իրավագիտություն	26	88	114
Քաղաքագիտություն (Քաղաքական կառավարում և քաղաքական վերլուծություն)	9	23	32
Հոգեբանություն (կառավարման հոգեբանություն)	5	11	16
ԸՆԴՀԱՆՈՒՐ	178	284	462

Նկար 3. Ակադեմիայի ուսանողների թվաքանակն՝ ըստ մասնագիտությունների (առկա համակարգում)




Նկար 4. Ակադեմիայի ուսանողների թվաքանակն՝ ըստ մասնագիտությունների (հեռակա համակարգում)




Նկար 5. Ակադեմիայի ուսանողների թվաքանակն՝ ըստ մասնագիտությունների (առկա և հեռակա համակարգերում)

Ընդհանուր




Նկար 6.

2009-2012թթ. վերականգնված ուսանողների թվաքանակը



Նկար 7.

2009-2012թթ. հեռացված (ազատված) ուսանողների թվաքանակը



Կառավարչական և գիտահետազոտական պրակտիկա

Կազմակերպվել և իրականացվել են առկա և հեռակա ուսուցման կառավարչական և գիտահետազոտական պրակտիկաները, ուսանողների կողմից ներկայացվել են հաշվետվություններ: Սահմանված ժամկետներում իրականացվել է պրակտիկաների պաշտպանություն: Էական փոփոխություններ են գրանցվել կառավարչական և գիտահետազոտական պրակտիկաների կազմակերպման և անցկացման ընթացքում մագիստրանտների հետ տարվող աշխատանքներում, ինչի արդյունքում բարձրացել է պրակտիկայի հաշվետվությունների և պաշտպանության արդյունքների որակը:

Գիտահետազոտական պրակտիկայի վայրի ընտրության համար հիմք է հանդիսացել մագիստրանտի մասնագիտությունը և ընտրված ատենախոսության թեման:

Հատկապես անհրաժեշտ է հիշատակել հեռակա ուսուցման 0913 թողարկման գիտահետազոտական պրակտիկայի հաշվետվությունների պաշտպանությունը:

Կառավարչական և գիտահետազոտական պրակտիկաները կազմակերպվել են ՀՀ Նախագահի աշխատակազմում, ՀՀ Ազգային ժողովում, ՀՀ սահմանադրական դատարանում, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակում, ՀՀ նախարարություններում և այլ մարմիններում՝ հետևյալ բաշխվածությամբ.

10.01.2011թ-04.02.2011թ. ժամանակահատվածում հեռակա ուսուցման **0913** թողարկման կառավարչական պրակտիկա (հաշվետվությունների պաշտպանություն՝ 12.02.2011թ. - 17.02.2011թ.)

Հ/հ	Կազմակերպության անվանումը	Մագիստրանտների թիվ
1.	ՀՀ Ազգային ժողով	7

2.	ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդ	13
3.	ՀՀ տարածքային կառավարման նախարարություն	4
4.	ՀՀ ֆինանսների նախարարություն	6
5.	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	5
6.	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	6
7.	ՀՀ սփյուռքի նախարարություն	8
8.	ՀՀ բնապահպանության նախարարություն	7
9.	ՀՀ ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակ	7
10.	ՀՀ արդարադատության նախարարություն	7
11.	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն	4
12.	ՀՀ մշակույթի նախարարություն	3
13.	ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե	4
14.	ՀՀ վերահսկիչ պալատ	1
15.	ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն	2
16.	ԼՂՀ Նախագահի աշխատակազմ	1
	ԸՆԴԱՄԵՆԸ	85

Կառավարչական պրակտիկան հնարավորություն է ընձեռում մագիստրանտներին ոչ միայն ծանոթանալ պետական կառավարման համակարգին, այլև ձեռք բերել որոշակի կառավարչական հմտություններ: Նման կառույցներում անցկացրած պրակտիկան օգնում է մագիստրանտներին ձեռք բերել լիարժեք գիտելիքներ պետական կառավարման համակարգի գործունեության մասին և ըմբռնել վերջինիս էությունը, տիրապետել տվյալ ոլորտի կարգավորման առանձնահատկություններին, ինչպես նաև ձեռք բերել անհրաժեշտ մասնագիտական փորձ հետագայում պետական կառավարման համակարգում աշխատելու համար:

21.02.2011թ-15.04.2011թ. Ժամանակահատվածում առկա ուսուցման **0915** թողարկման **գիտահետազոտական պրակտիկա** (հաշվետվությունների պաշտպանություն 25.04.2011թ. - 30.04.2011թ.)

<i>Հ/հ</i>	<i>Կազմակերպության անվանումը</i>	<i>Մագիստրանտների թիվ</i>
1.	ՀՀ Ազգային ժողով	4
2.	ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդ	11
3.	ՀՀ տարածքային կառավարման նախարարություն	9
4.	ՀՀ ֆինանսների նախարարություն	9
5.	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	2
6.	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	5
7.	ՀՀ սփյուռքի նախարարություն	6
8.	ՀՀ բնապահպանության նախարարություն	2
9.	ՀՀ սահմանադրական դատարան	3
10.	ՀՀ ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակ	13

11.	ՀՀ արդարադատության նախարարություն	6
12.	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	1
13.	ՀՀ մշակույթի նախարարություն	2
14.	ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ	3
15.	ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե	8
16.	ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչություն	1
17.	ՀՀ ԿԱ անշաժ գույքի կադաստրի պետական կոմիտե	1
	ԸՆԴԱՄԵՆԸ	86

04.07.2011թ-29.07.2011թ. Ժամանակահատվածում առկա ուսուցման **1016** թողարկման **կառավարչական պրակտիկա** (հաշվետվությունների պաշտպանություն՝ 02.08.2011թ. - 03.08.2011թ.)

<i>Հ/հ</i>	<i>Կազմակերպության անվանումը</i>	<i>Մագիստրանտների թիվը</i>
1.	ՀՀ Նախագահի աշխատակազմ	5
2.	ՀՀ Ազգային ժողով	5
3.	ՀՀ կառավարություն	2
4.	ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդ	7
5.	ՀՀ տարածքային կառավարման նախարարություն	7
6.	ՀՀ ֆինանսների նախարարություն	6
7.	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	5
8.	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	6
9.	ՀՀ սփյուռքի նախարարություն	3
10.	ՀՀ արդարադատության նախարարություն	2
11.	ՀՀ ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակ	5
12.	ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե	7
13.	ՀՀ սահմանադրական դատարան	2
14.	ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ	2
15.	ՀՀ մշակույթի նախարարություն	3
16.	ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչություն	4
17.	ՀՀ ԿԱ անշաժ գույքի կադաստրի պետական կոմիտե	5
	ԸՆԴԱՄԵՆԸ	74

24.10.2011թ-18.11.2011թ. Ժամանակահատվածում հեռակա ուսուցման **0913** թողարկման **գիտահետազոտական պրակտիկա** (հաշվետվությունների պաշտպանություն՝ 01.12.2011թ. - 05.12.2011թ.)

<i>Հ/հ</i>	<i>Կազմակերպության անվանումը</i>	<i>Մագիստրանտների թիվը</i>
1.	ՀՀ Նախագահի աշխատակազմ	3
2.	ՀՀ Ազգային ժողով	2

3.	ՀՀ կառավարություն	5
4.	ՀՀ քաղաքացիական ծառայության խորհուրդ	2
5.	ՀՀ տարածքային կառավարման նախարարություն	6
6.	ՀՀ ֆինանսների նախարարություն	4
7.	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	7
8.	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն	5
9.	ՀՀ սփյուռքի նախարարություն	2
10.	ՀՀ առողջապահության նախարարություն	1
11.	ՀՀ բնապահպանության նախարարություն	2
12.	ՀՀ սահմանադրական դատարան	1
13.	ՀՀ ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակ	1
14.	ՀՀ արդարադատության նախարարություն	5
15.	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն	3
16.	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	1
17.	ՀՀ մշակույթի նախարարություն	2
18.	ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակ	7
19.	ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե	3
20.	ՀՀ ԿԱ անշաժ գույքի կադաստրի պետական կոմիտե	1
21.	ՀՀ դատական դեպարտամենտ	6
22.	ՀՀ կենտրոնական բանկ	7
23.	ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով	2
24.	ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողով	1
25.	ՀՀ ԱԴ ԴԱՀԿ ծառայություն	1
26.	ԼՂՀ Նախագահի աշխատակազմ	1
27.	ԼՂՀ կենտրոնական բանկ	1
28.	ԼՂՀ ֆինանսների նախարարություն	1
29.	ԼՂՀ սոցիալական ապահովության նախարարություն	1
30.	ՀՀ Լոռու մարզի վարչական դատարան	1
31.	ՀՀ Լոռու մարզպետարան	1
	ԸՆԴԱՄԵՆԸ	86

Ասպիրանտուրա

Հունվար-մարտ ամիսներին շարունակվել են առաջին տարվա առկա և հեռակա ուսուցման ասպիրանտուրայի 1001 թողարկման առաջին կիսամյակի լսարանային պարապմունքները:

Մարտ ամսին կազմակերպվել և անցկացվել է 1001 թողարկման ասպիրանտուրայի առաջին կիսամյակի քննաշրջանը (ընդհանուր առմամբ 5 ստուգարք և քննություն):

Մարտ- մայիս ամիսներին կազմակերպվել է Ակադեմիայի ասպիրանտուրայի 15 հավանական դիմորդների նախապատրաստական դասընթացներն ու քննությունները «Օտար լեզու» (անգլերեն և ֆրանսերեն) և «Համակարգչից օգտվելու հմտություններ» առարկաներից Հայաստանի ամերիկյան համալսարանում, Այլանս Ֆրանսեզ կազմակերպությունում և Երևանի պետական համալսարանի հաշվիչ կենտրոնում:

Համաձայն ՀՀ ԲՈՀ-ի «Որակավորման քննությունների կարգի»՝ մայիս-հունիս ժամանակահատվածում անցկացվել է ասպիրանտների և հայցորդների որակավորման գարնանային քննաշրջանը (4 առարկա):

Մայիս-հունիս ամիսներին կազմակերպվել է առկա ուսուցմամբ ասպիրանտուրայի ընդունելությունը, որի արդյունքում Ակադեմիայի առկա ուսուցմամբ ասպիրանտուրա են ընդունվել 4 դիմորդ, որից 3-ը՝ անվճար հիմունքներով, պարտադիր զինվորական ծառայությունից տարկետման իրավունքով, 1-ը՝ վճարովի հիմունքով առանց պարտադիր զինվորական ծառայությունից տարկետման իրավունքի:

Հունիս ամսին լրացել է առկա ուսուցման 14 ասպիրանտների ուսուցման ժամկետը, որոնք ազատվել են ասպիրանտուրայից: Ասպիրանտներից 12-ը բարեհաջող պաշտպանել են թեկնածուական ատենախոսությունները:

Ըստ ժամանակացույցի՝ հուլիսի 15-ին ավարտվել են Ակադեմիայի առաջին տարվա 1001 թողարկման ասպիրանտների 2010-2011թթ. ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի լսարանային պարապմունքները:

Կազմակերպվել և անցկացվել են Ակադեմիայի ասպիրանտների և հայցորդների հերթական ատեստավորումները:

Հոկտեմբեր-նոյեմբեր անցկացվել է որակավորման աշնանային քննաշրջանը (4 առարկաներից քննություն և ստուգաքթ):

Հեռակա ուսուցմամբ ասպիրանտուրայի ընդունելությունը տեղի է ունեցել նոյեմբերին, որի արդյունքում ընդունվել է 3 ասպիրանտ:

Նոյեմբերին լրացել է հեռակա ուսուցմամբ 2 ասպիրանտի ուսումնառության ժամկետը, որոնք ազատվել են ասպիրանտուրայից:

2011 թվականի ընթացքում վաղաժամկետ ուսումնառությունից ազատվել են մեկական ասպիրանտ և հայցորդ՝ թեկնածուական ատենախոսության բարեհաջող պաշտպանության կապակցությամբ:

Ներկայումս Ակադեմիան ունի առկա ուսուցմամբ 15, հեռակա ուսուցմամբ 8 ասպիրանտ, 1 դոկտորանտ և 39 հայցորդ:

ՀՀ քաղաքացիական ծառայողների վերապատրաստման դասընթացներ

ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի և ՀՀ պետական կառավարման Ակադեմիայի միջև 2011 թվականի փետրվարի 23-ին կնքված «Քաղաքացիական ծառայողների «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքով նախատեսված վերապատրաստման ծառայությունների» մատուցման N ՔՕԽ ՊՇՁԲ-10/12-1 պայմանագրի շրջանակներում 2011 թվականի ընթացքում փաստացի վերապատրաստվել են **524** քաղաքացիական ծառայողներ (**18 խումբ**):

Վերապատրաստումն իրականացվել է ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի 2007 թվականի փետրվարի 5-ի N 107-Ս, 2007 թվականի հունվարի 26-ի N 76-Ս, 2007 թվականի հոկտեմբերի 18-ի N 863-Ս որոշումներով հաստատված՝

քաղաքացիական ծառայողների վերապատրաստման ծրագրերին և ժամանակացույցին համապատասխան:

Վերապատրաստման դասընթացները կազմակերպելու նպատակով, հաստատված ծրագրերին համապատասխան, իրականացվել է դասախոսական կազմի ընտրություն և հրահանգավորում:

Ակադեմիան իրականացրել է քաղաքացիական ծառայողների աշխատանքի արդյունավետության բարձրացմանն ուղղված վերապատրաստման ծրագրեր՝ կառավարման հնարքների, կառավարչական որոշումների ընդունման մեթոդների, ֆինանսաբյուջետային, հաշվապահական և պետական կառավարման հմտությունների ուսուցման վերաբերյալ, ինչպես նաև քաղաքացիական ծառայողների առաջին վերապատրաստում (ՀՀ վերահսկիչ պալատի քաղաքացիական ծառայողներ):

Ակադեմիայի համագործակցության շրջանակներն ընդլայնելու և կանոնադրական խնդիրներից բխող տարբեր ծրագրերի իրականացման նպատակով մի շարք տեղական և միջազգային կազմակերպություններ են ներկայացվել մրցույթների մասնակցության հայտեր:

Կարևորվել է **համագործակցության աշխարհագրության ընդլայնումը**, ինչպես նաև համագործակցության զարգացման նպատակով նոր եզրերի որոնումը: Ակադեմիան մասնակցել է պետական մարմինների և հասարակական կազմակերպությունների կողմից կազմակերպված բազմաթիվ քննարկումների, սեմինարների:

Ընդլայնվել են Ակադեմիայի համագործակցության շրջանակները ոչ միայն տեղական, այլև միջազգային և արտասահմանյան կազմակերպությունների հետ:

Դրանք են՝

1. Մակեդոնիայի Օհրիդ քաղաքում 2012 թ. մայիսի 23-26-ին կայանալիք NISPAcee «Հանրային կառավարման արևելքն ու արևմուտքը. զարգացման քսան տարիներ» թեմայով միջազգային գիտաժողովին մասնակցելու համար Ակադեմիայի արտաքին կապերի գծով պրոռեկտոր Թ.Խեչոյանը «Փոքր և միջին ձեռնարկությունների ուսուցման աջակցության հանրային քաղաքականությունը Հայաստանում» վերտառությամբ հողվածը ներկայացրել է «Հանրային քաղաքականության վերլուծության զարգացման հիմնահարցեր» աշխատանքային խմբի ղեկավարների գրախոսմանը, այն հավանության է արժանացել, և հողվածի հեղինակը գիտաժողովում ներկայացնելու առաջարկ է ստացել:

2. Նովոսիբիրսկի գիտական համագործակցության զարգացման կենտրոնից «Տնտեսության և կառավարման ժամանակակից միտումները. նոր հայացք», «Տնտեսագիտության արդի հիմնահարցեր», «Օրինականությունը և իրավակարգը ժամանակակից հասարակարգում», «Իրավագիտության արդի հիմնահարցեր», «Պատմության և քաղաքագիտության արդի հիմնահարցեր», «Ժամանակակից հասարակարգի արժեքային համակարգը», «21-րդ դարի մտավոր ներուժը», «Հոգեբանություն և մանկավարժություն. գործնական կիրառման մեթոդը և հիմնախնդիրները» թեմաներով միջազգային գիտապրակտիկ գիտաժողովների մասնակցության հրավերներ են ստացվել (մասնակցության ձևը՝ հեռակա): Ակադեմիայի արտաքին կապերի գծով պրոռեկտոր Թ. Խեչոյանն ընտրվել է նշված կազմակերպության տնտեսագիտական ուղղվածությամբ միջազգային գիտաժողովների խմբագրական խորհրդի անդամ:

3. Փոխադարձ համաձայնություն է ձեռք բերվել Ակադեմիայի և ՌԴ Նախագահին առընթեր ժողովրդական տնտեսության և պետական ծառայության ակադեմիայի Հարավուսաստանյան մասնաճյուղ ինստիտուտի միջև պետական կառավարման և տեղական ինքնակառավարման ոլորտների կադրերի պատրաստման և վերապատրաստման, միջազգային գիտաժողովների և սիմպոզիումների, սեմինարների, «կլոր սեղանների» կազմակերպման, ինչպես նաև դասախոսների և ուսանողների փոխանակման ուղղությամբ:

4. Հայաստանում ԱՄՆ դեսպանության հասարակայնության հետ կապերի գրասենյակի ղեկավարի տեղակալ Շ. Օհարայից առաջարկ է ստացվել ԱՄՆ պետքարտուղարության կրթական և մշակութային փոխանակումների վարչության հետ համատեղ իրականացվող «Ամերիկագիտության ինստիտուտներ» 2012 թվականի վեցշաբաթյա ամառային ծրագրին (ընտրությունը՝ մրցակցային հիմունքներով) Ակադեմիայի դասախոսների մասնակցության վերաբերյալ: Տեղեկատվությունը տրամադրվել է Ակադեմիայի դասախոսներին:

5. Հանդիպումներ և բանակցություններ են տեղի ունեցել Միավորված ազգերի զարգացման ծրագրի (UNDP) ներկայացուցիչներ Աննի Դեմիրճյանի և Ալլա Բակունցի հետ՝ հետագա համագործակցության հարցերի շուրջ: Նախնական պայմանավորվածություն է ձեռք բերվել Ակադեմիայում «Սովորել գործելու միջոցով» թեմայով վերապատրաստողների վերապատրաստման դասընթաց կազմակերպելու վերաբերյալ: Քննարկվել են հետագա համագործակցության ոլորտներն ու հնարավորությունները:

6. Ակադեմիայի ռեկտոր Ա. Լոքյանը մի շարք հանդիպումներ է ունեցել և բանակցել միջազգային կառույցների հայաստանյան ներկայացուցիչների (Միավորված Ազգերի Կազմակերպության մշտական համակարգող, ՄԱԶԾ մշտական ներկայացուցիչ Դ. Գերչևայի, Շվեյցարիայի համագործակցության հայաստանյան գրասենյակի ղեկավար Ջ. Ալլահվերդյանի, Շվեյցարիայի համագործակցության հայաստանյան գրասենյակի ծրագրերի համակարգող Վ. Հովհաննիսյանի, Եվրամիության TEMPUS ծրագրի հայաստանյան գրասենյակի համակարգող Լ. Կարլովայի, Գերմանիայի կրթական փոխանակման ծառայության (DAAD) տեղեկատվական կենտրոնի տնօրեն Թ. Լաուֆերի, Համաշխարհային բանկի հայաստանյան գրասենյակի ներկայացուցիչ Դ. Մելիքյանի) հետ:

7. Ակադեմիայում հանդիպում է կազմակերպվել Գերմանիայի կրթական փոխանակման ծառայության (DAAD) տեղեկատվական կենտրոնի տնօրեն Թ. Լաուֆերի հետ: Վերջինս մասնակիցներին (դասախոսներ, ասպիրանտներ, մագիստրանտներ) ներկայացրել է Գերմանիայի կրթական ծրագրերը և դրանց մասնակցության հնարավորությունները:

8. Լեհաստանի պետական կառավարման ազգային դպրոցի տնօրեն Յացեկ Շապուտովիչի հետ հանդիպման արդյունքում քննարկվել են համատեղ սեմինարների և գիտաժողովների կազմակերպման, ուսանողների փոխանակման, ինչպես նաև Ակադեմիայի դասախոսների՝ Լեհաստանի պետական կառավարման ազգային դպրոցում վերապատրաստման հնարավորությունները:

9. «Պետական կառավարում և քաղաքացիական ծառայության կառավարում» թեմայով միջազգային սեմինարին մասնակցելու առաջարկ է ստացվել Գալիլեյի

կառավարման միջազգային ինստիտուտից (Իսրայել): Մեմբերները կայանալու են 2012 թ. հունվարի 9-20-ին և հունիսի 28-ից հուլիսի 9-ին:

10. Ղազախստանի Հանրապետության Նախագահին առընթեր պետական կառավարման ակադեմիայից 2011 թ. նոյեմբերի 25-ին Աստանայում կայացած «Արդյունավետ պետական կառավարում» խորագրով 3-րդ ակադեմիական սիմպոզիումին իր հողվածով մասնակցել է Ակադեմիայի քաղաքական կառավարման և քաղաքական վերլուծության ամբիոնի ասպիրանտ Ռ. Էլամիրյանը:

11. «Երիտասարդությունը և կրթությունը-2010 կարիերային հաջողության գործոնները և ռազմավարությունները» թեմայով միջբուհական գիտաժողովի մասնակցության հրավեր է ստացվել Մոսկվայի տնտեսագիտության, վիճակագրության և ինֆորմատիկայի համալսարանի (ՄՅՏԻ) Աստրախանի մասնաճյուղից: Ակադեմիայի արտաքին կապերի գծով պրոռեկտոր Թ. Խեչոյանը ներկայացրել է «Պետական ծառայողների ուսուցման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» հոդվածը, որը հրատարակվել է գիտաժողովի հոդվածների ժողովածուում:

12. ԱՄՆ կրթական զարգացման ակադեմիայի և Թուրքիայի քաղաքացիական հասարակության զարգացման կենտրոնի հետ համատեղ, Անկարայում ԱՄՆ դեսպանատան աջակցությամբ իրականացվող «Երիտասարդ առաջնորդներ» ծրագրին Ակադեմիայի 21-35 տարեկան մագիստրանտների և ասպիրանտների (երիտասարդ դասախոսների)՝ երիտասարդ առաջնորդների մասնակցության հրավեր է ստացվել: Մրցույթով անցել և ծրագրին մասնակցել է Ակադեմիայի ասպիրանտ Վ. Դիլանյանը:

13. Ակադեմիայի մի շարք դասախոսներ և ասպիրանտներ մասնակցել են Նովոսիբիրսկում, Սանկտ Պետերբուրգում, Եկատերինբուրգում կայացած միջազգային գիտաժողովներին, իսկ հոդվածները տպագրվել են գիտաժողովների նյութերում:

14. Քաղաքական կառավարման և քաղաքական վերլուծության ամբիոնի վարիչ Մ. Մարգարյանը և ամբիոնի դասախոս Մ. Զաքարյանը համագործակցում են Միսիթարյանների միաբանության՝ Շվեյցարիայում գտնվող հայագիտական կենտրոնի հետ:

15. Ակադեմիայի արտաքին կապերի գծով պրոռեկտոր Թ. Խեչոյանն ընտրվել է Օրյոլի պետական ծառայության տարածաշրջանային ակադեմիայի «Среднерусский вестник общественных наук» ամսագրի միջազգային փորձագիտական խմբագրական խորհրդի անդամ:

16. 2011 թ. նոյեմբերի 30-ին Ակադեմիայի և ՏԻՐԻ կազմակերպության (Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորություն) միջև փոխըմբռնման համագործակցության վերաբերյալ հուշագիր կնքվեց հանրային ինտեգրման կրթական ցանցի շրջանակներում: Ակադեմիան դարձավ հանրային ինտեգրման կրթական ցանցի 100-րդ անդամ կազմակերպությունը:

Ակադեմիայի ստորաբաժանումները և մասնագետները պարբերաբար տեղեկացվել են քաղաքագիտության, իրավագիտության, հոգեբանության և այլ ոլորտներում համագործակցությունների, ծրագրերի, միջազգային գիտաժողովների վերաբերյալ, ինչպես նաև ստացել են օժանդակություն հայտերի լրացման հարցում:

Մասնակցել ենք՝

1. Որպես Եվրամիության փորձագետ, Ակադեմիայի արտաքին կապերի գծով պրոռեկտոր Թ.Խեչոյանը 2011 թ. մարտի 28-30-ին Թուրինում Եվրոպայի կրթական հիմնադրամի կողմից կազմակերպված «ԵՄ փոքր բիզնեսի աջակցության ծրագրի մարդկային կապիտալի չափումները» թեմայով ԵՄ փորձագետների քննարկումներին,

2. Գերմանիայի միջազգային համագործակցության ծրագրի (GIZ) աջակցությամբ Թբիլիսիում 2011 թ. սեպտեմբերի 12-16-ին կայացած ղեկավար անձնակազմի վերապատրաստման ամառային դպրոցին,

3.2011թ. սեպտեմբերի 15-16-ին Օրյոլի պետական ծառայության տարածաշրջանային ակադեմիայում կայացած «Պետական և համայնքային կառավարման հիմնախնդիրները և հեռանկարները հետձգնաժամային ժամանակաշրջանի ինովացիոն տնտեսությունում» թեմայով երկրորդ սլավոնական համաժողովին,

4.«Միավորված ազգերի կազմակերպության տնտեսական և սոցիալական հանձնաժողովի Ասիայի և Խաղաղօվկիանոսյան ավազանի երկրների տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաները զարգացման համար» կենտրոնի (UN-APCICT/ESCAP) հրավերով, Միավորված ազգերի կազմակերպության կողմից 2011 թ. հոկտեմբերի 24-28-ին Հարավային Կորեայում կազմակերպված Ասիայի և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի՝ «Տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաները մարդկային կարողությունների զարգացման համար» երկրորդ համաժողովին և այլն:

Հանդիպումներ պետական կառավարման համակարգի ներկայացուցիչների, համապատասխան մասնագետների, գիտնականների, ինչպես նաև արտերկրի գիտական հաստատություններում դասավանդող դասախոսների հետ:

1.2011թ. դեկտեմբերի 12-ին **ՀՀ սահմանադրական դատարանի նախագահ Գագիկ Հարությունյանը** դասախոսական կազմի և մագիստրանտների համար հանդես է եկել «Վերափոխվող հասարակական համակարգերում սահմանադրական զարգացումների արդի հիմնախնդիրները» թեմայով դասախոսությամբ:

Հանդիպման ընթացքում Գագիկ Հարությունյանը անդրադարձավ Սահմանադրության պատմությանը՝ սկսած Արիստոտելից մինչև մեր օրերը: Նա ներկայացրեց նաև հայ իրականության մեջ ստեղծված Սահմանադրության առաջին նախագծից մինչև Հայաստանի Երրորդ Հանրապետության Սահմանադրության անցած ճանապարհը՝ կարևորելով երկրի գերագույն օրենքի դերը քաղաքական, իրավական, սոցիալ-տնտեսական հարաբերությունները կարգավորելու գործում: Նա ունկնդիրներին հանգամանորեն ներկայացրեց Սահմանադրական դատարանի գործառույթները և Սահմանադրական դատարանի գործունեությանն առնչվող բարեփոխումները: Հանդիպման մասնակիցների ուշադրությունը հրավիրեց այն հարցերի շուրջ, որոնք այսօր էլ առանցքային կարևոր նշանակություն ունեն թե՛ դասական ժողովրդավարության և թե՛ նորանկախ երկրների կայուն, դինամիկ զարգացումը երաշխավորելու, հասարակական հարաբերությունների սահմանադրականացման, իրավունքի գերակայության երաշխավորման գործում:

Ավելի քան երկժամյա հանդիպումն ավարտվեց արծարծված հիմնախնդիրների աշխույժ քննարկմամբ:

2.2011 թ. դեկտեմբերի 6-ին «ՎիվաՍել-USU» Ընկերության գլխավոր տնօրեն Ռալֆ Յիրիկյանը Ակադեմիայի ուսանողներին ներկայացրեց կազմակերպության գործարար կառավարման փորձը:

«ՎիվաՍել-USU» Ընկերության և Ակադեմիայի միջև սկսված համագործակցությունը վավերացվեց փոխգործակցության հուշագրով:

3. 2011 թ. նոյեմբերի 25-ին Ակադեմիայի հյուրն էր Հայաստանի պետական անվանի գործիչներից մեկը՝ ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի ակադեմիկոս, գյուղատնտեսական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Ռուսաստանի Դաշնության և միջազգային մի շարք ակադեմիաների անդամ, «Սևանի փրկության ազգային ծրագիր» պետական հանձնաժողովի նախագահ **Վլադիմիր Մովսիսյանը**: Վլադիմիր Մովսիսյանը հանդիպման մասնակիցներին ներկայացրեց այսօր աշխարհին, այդ թվում Հայաստանին հուզող մի քանի զլոբալ՝ պարենային, վառելիքաէներգետիկ, բնապահպանական և քաղցրահամ ջրի հիմնախնդիրները: Նա առանձնահատուկ անդրադարձավ «Սևանի փրկության ազգային ծրագիր» իրականացման փուլերին և այդ ծրագրի կարևորությունը մեր հանրապետության գյուղատնտեսության զարգացման, բնապահպանության, տնտեսության զարգացման գործում: Ակադեմիայի գիտական խորհրդի որոշմամբ Վլադիմիր Մովսիսյանին շնորհվեց Ակադեմիայի պատվավոր դոկտորի կոչում:

4.2011թ. նոյեմբերի 22-ին Ակադեմիայում հանդիպում էր կազմակերպվել **Հունգարիայի պետական համալսարանի արևելագիտության բաժնի դասախոս, հայագետ Բենեդեկ Ժիգմոնդի** հետ: Հանդիպմանը, որին մասնակցում էին Ակադեմիայի պրոֆեսորադասախոսական կազմը, ասպիրանտները, մագիստրանտները և աշխատակիցները, պրն Ժիգմոնդը հայերեն լեզվով դասախոսությամբ հանդես եկավ «Հունգարահայկական կապերը» և «Հունգարիայի հայկական գաղութի պատմությունը» թեմաներով:

5.2011թ. հոկտեմբերի 17-19-ին Ակադեմիայում **Կանադայի Կարլտոն համալսարանի հանրային քաղաքականության և կառավարման դպրոցի պրոֆեսոր Ալան Մապլվը** դասախոսություններով հանդես եկավ Ակադեմիայի դասախոսների, ասպիրանտների և մագիստրանտների համար «Բյուջեի պլանավորումը ճգնաժամի պայմաններում», «Առողջապահության ոլորտի բարեփոխումները» և «Ծախսեր-արդյունք վերլուծության ծախսերն ու արդյունքները» թեմաներով:

6.ՀՀ պետական կառավարման ակադեմիան **Գերմանիայի ակադեմիական փոխանակման ծառայության (DAAD)** հետ համատեղ 2011 թ. հոկտեմբերի 11-14-ին կազմակերպել էր «Եվրոպական հարևանության քաղաքականություն» թեմայով դասընթացը, որին մասնակցում էին հայաստանյան և գերմանական բուհերի, ՀՀ պետական կառավարման ակադեմիայի, Երևանի պետական համալսարանի, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի, Սլավոնական համալսարանի, Եվրոպական տարածաշրջանային ակադեմիայի, Հայաստանում ֆրանսիական համալսարանի, Վ. Բրյուսովի անվան պետական լեզվաբանական համալսարանի, Բեռլինի ազատ համալսարանի, Հաննովերի համալսարանի, Այխշտատի համալսարանի 20 ուսանողներ: Դասընթացները վարում էին

Գերմանիայից հրավիրված պրոֆեսորներ Ուրսուլա Բիրզլը և Մինդի Դաազը՝ գերմաներենից հայերեն համընթաց թարգմանությամբ:

7.Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության աջակցությամբ իրականացվող «Միջազգային կապերի կարողությունների հզորացում (CABIR)» ծրագրի շրջանակներում Ակադեմիան Ժնևի միջազգային և զարգացման հետազոտությունների ինստիտուտի և ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի հետ համատեղ 2011 թ. հոկտեմբերի 11-13-ին կազմակերպել էր «Առևտուր և զարգացում» թեմայով դասընթաց, որին մասնակցել են ՀՀ արտաքին գործերի, ՀՀ էկոնոմիկայի, ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարությունների ներկայացուցիչները: Դասընթացը վարում էին **պրոֆեսոր Մարիա-Ալեխանդրա Արիստեգետա Ալվարեսը** և Ժնևի միջազգային և զարգացման հետազոտությունների ինստիտուտի ղեկավար կադրերի ուսուցման ծրագրերի ղեկավար **Ֆիլիպ դե Կաստրոն**:

8.Կանգասի համալսարանի հանրային հարցերի և կառավարման դպրոցի **պրոֆեսոր Ջոն Նալբանդյանը** 2011 թ. դեկտեմբերի 8-ին Ակադեմիայում հանդես եկավ «Համագործակցային առաջնորդությունը կառավարման համակարգում» թեմայով դասախոսությամբ:

Ռազմավարական պլանավորման գործընթաց

1.«Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Ակադեմիայի Խորհրդի հաստատմանն է ներկայացվել Ակադեմիայի ռազմավարական ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր), որը քննարկվել և հավանության է արժանացել Ակադեմիայի գիտական խորհրդի 2011 թվականի նոյեմբերի 30-ի նիստում (Ակադեմիայի գիտական խորհրդի 2011 թվականի նոյեմբերի 30-ի նիստի N 86 արձանագրություն):

Ծրագրում փորձ է արված բացահայտել այն հիմնական ներքին և արտաքին գործոններն ու միտումները, որոնք կարող են որոշիչ ներգործություն ունենալ Ակադեմիայի հետագա զարգացման վրա՝ կանխատեսելով նոր հնարավորություններ ու հեռանկարներ:

Ծրագրի անբաժանելի մասն է կազմում հստակորեն ձևակերպված ուղղվածություն ունեցող ռազմավարական մոտեցումների վրա հիմնված գործողությունների (միջոցառումներ) ժամանակացույցը:

Բոլոր նպատակները սահմանվել են Ակադեմիայի ընդհանուր առաքելության և տեսլականի համատեքստում: Յուրաքանչյուր նպատակին հասնելու համար սահմանվել են մի շարք հիմնախնդիրներ և մշակվել այդ խնդիրներից յուրաքանչյուրի լուծմանը հասնելու համապատասխան միջոցառումներ, ծրագրեր և այլն:

Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է Ակադեմիայի կրթական մակարդակի բարձրացում, միջազգային չափանիշների համապատասխանեցում և ՀՀ հանրային ծառայության համակարգի համար ժամանակակից հասարակության և տնտեսության պահանջներին համապատասխանող, մրցունակ և բարձրորակ մասնագետների պատրաստում, ինչպես նաև առաջիկայում՝ Ակադեմիան՝ որպես ՀՀ հանրային ծառայության համակարգի հիմնական կադրային կենտրոնի վերակազմավորում:

Ակադեմիան՝ որպես բարոյաէթիկական կենտրոն հանրային ծառայողների և քաղաքական միջավայրում ժողովրդավարության որակի բարձրացման համար:

Ակադեմիան վարչական, պրոֆեսորադասախոսական և ունկնդիրների կազմով պետք է կատարի բարոյահոգեբանական գտում՝ հավատարիմ մնալով պետականության, հայրենիքի, ազգի և ղեկավարի այնպիսի իմիջի ձևավորմանը, որը բարեխղճության, անաչառության, ազնվության, օրինականության, իրավունքի գերակայության սկզբունքներով կապահովի հանրային անվտանգություն, ինչպես նաև սոցիալական երկխոսություն, սերունդների համերաշխություն և «նոր հումանիզմի» սկզբունքների ներդրում:

2. Ռազմավարական պլանավորման գործընթացի ներմուծման նպատակով ստեղծվել են 2 աշխատանքային խմբեր՝ ռեկտորի գլխավորությամբ:

Հրատարակչական գործունեություն

Հրատարակման փուլում են՝

1. «Կոնֆլիկտները և նրանց կանխարգելման ուղիները» ուսումնական ձեռնարկ (Կառավարման հոգեբանության ամբիոնի դասախոսներ),

2.«Քաղաքական լիդերություն» (հեղինակ՝ քաղաքական կառավարման և քաղաքական վերլուծության ամբիոնի վարիչ, քաղ.գիտ.դոկ, պրոֆեսոր Մ.Մարգարյան) ուսումնական ձեռնարկ,

3.«Քաղաքական հաղորդակցություններ» ուսումնական ձեռնարկ (Մ.Մարգարյանի և Ռ.Մելիքյանի հեղինակությամբ),

4. «Քաղաքական կառավարում և հանրային վարչարարություն» դասագիրք, (Մ.Մարգարյանի և Կ.Գալոյանի հեղինակությամբ) և այլն:

«Քաղաքացիական ծառայություն» շաբաթաթերթը իր էջերում պարբերաբար անդրադառնում է Ակադեմիայի գործունեությանը, հրապարակում է քաղաքացիական ծառայության համակարգում ընդգրկված պետական մարմինների աշխատակազմերում առկա քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնների մասին հայտարարությունները, հասարակությանը ներկայացնում է քաղաքացիական ծառայության համակարգի առջև դրված խնդիրները, իրականացվող գործընթացները, օրենսդրական դաշտում կատարվող փոփոխությունները:

2012 թվականի հունվարից Հայաստանի լրատվական դաշտը կհարստանա ևս մեկ լրատվամիջոցով՝ «**Հանրային ծառայություն**» շաբաթաթերթով, որի հիմնադիրն է Ակադեմիան: Թերթի ծնունդը ինքնանպատակ չէ: 2012 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ է մտնելու «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքը, որով սահմանվում են ՀՀ հանրային ծառայության սկզբունքները, կազմակերպման կարգը, էթիկայի կանոնները, ինչպես նաև կարգավորվում են բարձրաստիճան պաշտոնատար անձանց գույքի, եկամուտների ու փոխկապակցված անձանց մասին հայտարարագրման հետ կապված հարաբերությունները: Հանրային ծառայությունն ընդգրկում է պետական ծառայությունը, համայնքային ծառայությունը, պետական և համայնքային պաշտոնները: Թերթի նպատակն է հանրությանն իրազեկել հանրային ծառայության գործունեության ոլորտներին, հանրային ծառայությունում ընդգրկված մարմիններում իրականացվող գործընթացներին, նրանց գործառույթներին, ինչպես նաև կենտրոնացված կարգով հրապարակել հանրային ծառայության համակարգում ընդգրկված մարմիններում առաջացող թափուր պաշտոնների մասին հայտարարություններ:

Ակադեմիայում իրականացված կառուցվածքային բարեփոխումներին և կադրային փոփոխություններին համապատասխան կատարվել են փոփոխություններ նաև «**Հանրային կառավարում**» գիտական հանդեսի խմբագրական խորհրդի կազմում:

Ակադեմիայի «**Հանրային կառավարում**» գիտական հանդեսի խմբագրական խորհրդի անդամության համաձայնություն է ձեռք բերվել հետևյալ միջազգային փորձագետներից՝ **Ալան Մասլով**՝ Կանադայի Կարլտոն համալսարանի հանրային քաղաքականության և կառավարման դպրոցի տնօրեն, պրոֆեսոր, **Լեսլի Փալ**՝ Կանադայի Կարլտոն համալսարանի հանրային քաղաքականության և կառավարման դպրոցի պրոֆեսոր, **Փոլ Բրաուն**՝ Կանադայի Դալհաուսի համալսարանի պետական կառավարման դպրոցի պրոֆեսոր, **Վալերի Բակումենկո**՝ Ուկրաինայի մունիցիպալ կառավարման ակադեմիայի գիտության գծով պրոռեկտոր, Ուկրաինայի բարձրագույն որակավորման հանձնաժողովի փորձագիտական խորհրդի նախագահի տեղակալ, հանրային կառավարման դոկտոր, պրոֆեսոր, **Վլադիմիր Տերտիչկա**՝ Ուկրաինայի քաղաքականության վերլուծության և ռազմավարության ինստիտուտի տնօրեն, Ուկրաինայի Նախագահին առընթեր պետական կառավարման ազգային ակադեմիայի պրոֆեսոր, հանրային կառավարման դոկտոր, պրոֆեսոր, **Վիտալի Նեկրասով**՝ ՌԴ Նախագահին առընթեր ժողովրդական տնտեսության և պետական ծառայության ակադեմիայի Հարավրուսաստանյան մասնաճյուղ ինստիտուտի միջազգային կապերի գծով պրոռեկտոր, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր, **Իգոր Գանչերենկո**՝ Բելառուսի Հանրապետության Նախագահին առընթեր կառավարման ակադեմիայի ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, **Արմեն Հարությունյան**՝ Կենտրոնական Ասիայում ՄԱԿ-ի մարդու իրավունքների հանձնակատարի ներկայացուցիչ, իրավագիտության դոկտոր, պրոֆեսոր:

Ակադեմիայի «**Հանրային կառավարում**» գիտական հանդեսում հրատարակվել են գիտական հոդվածներ ՌԴ Նախագահին առընթեր ժողովրդական տնտեսության և պետական ծառայության ակադեմիայի, նույն Ակադեմիայի Հարավրուսաստանյան մասնաճյուղ ինստիտուտի, ՌԴ կառավարությանն առընթեր ֆինանսական համալսարանի, Բելառուսի Հանրապետության Նախագահին առընթեր կառավարման ակադեմիայի, Ուկրաինայի Նախագահին առընթեր պետական կառավարման ակադեմիայի, Ուկրաինայի մունիցիպալ կառավարման ակադեմիայի, Թբիլիսիի պետական համալսարանի, Կանադայի Կարլտոն համալսարանի հանրային քաղաքականության և կառավարման դպրոցի գիտաշխատողների հեղինակությամբ:

«**Հանրային կառավարում**» գիտական հանդեսի վերջին համարն առաքվել է արտասահմանյան հեղինակներին՝ Կանադայի Կարլտոն համալսարանի հանրային քաղաքականության և կառավարման դպրոցի, Բելառուսի Հանրապետության Նախագահին առընթեր կառավարման ակադեմիայի, Հյուսիսային Կովկասի պետական ծառայության ակադեմիայի, Նովոսիբիրսկի պետական տեխնիկական համալսարանի, Ռուսաստանի առաջին Նախագահ Բ.Ն.Ելցինի անվան Ուրալի պետական տեխնիկական համալսարանի փորձագետներին:

Գիտատեխնիկական գրադարան

Հաշվետու տարում Ակադեմիայի գրադարանի գրքային ֆոնդ է մուտքագրվել նոր գրականություն (250 միավոր՝ հայերեն գրականություն, 14 միավոր՝ ռուսերեն գրականություն, 21 միավոր՝ անգլերեն գրականություն, 297 միավոր՝ ամսագրեր, 89 միավոր՝ սեղմագրեր, 7 միավոր՝ ատենախոսություններ): Համալրվել է նաև CD-ROM լազերային սկավառակների ֆոնդը:

Հաշվետու շրջանում իրականացվել է ֆոնդերի նպատակային համալրում՝ ելնելով ուսումնական ծրագրերի և Ակադեմիայի գիտական գործընթացի պահանջներից:

Համալրումն ընթացել է հետևյալ փուլերով՝

- ✓ պլանավորում և աղբյուրների ընտրություն,
- ✓ գրականության ընդունում,
- ✓ հաշվառում-բաշխում:

Գրականության ընտրության հարցում հաշվի են առնվել ընթերցողի պահանջները (ըստ մեթոմների քարտարանի) և մասնագետների կարծիքները: Համալրման հիմնական աղբյուրներն են եղել դրամական փոխանցումները, միջազգային գրքափոխանակությունը և նվիրատվություններ:

Որպես NISPACEe (Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների կառավարման ինստիտուտների և դպրոցների ցանց)-ի անդամ, Ակադեմիան անվճար հիմունքներով ստացել է NISPACEe-ի կողմից հրատարակված գրքերն ու ամսագրերը՝ համալրելով գրադարանային ռեսուրսները Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրների փորձագետների ուսումնասիրություններով:

Բաց հասարակության ինստիտուտի (OSI) «Տեղական ինքնակառավարման և հանրային ծառայությունների բարեփոխումների նախաձեռնություն» (LGI) հետ համագործակցության արդյունքում նշված կազմակերպությունից անվճար հիմունքներով ստացվել են հետևյալ գրքերը (յուրաքանչյուրից երկուական օրինակ).

- ✓ It is good to lead well: The ABC book of good leadership,
- ✓ Making Public Finance Public,
- ✓ Mixes, Matches, and Mistakes: New Public Management in Russia and Former Soviet Union Republics,
- ✓ A Practical Guide to Building Local Government: the Polish Experience:

Հաշվետու ժամանակահատվածում վերստեղծվել է գիտատեխնիկական գրադարանի 11000 քարտից բաղկացած քարտադարանը, որից 2800 քարտ նորացվել է:

Հուլիսին կատարվել է Ակադեմիայի գրադարանի ֆոնդի գույքագրում, իրականացվել է թերթերի բաժանորդագրության գործընթացը:

Գրադարանային փուլերի՝ գրականության համալրման, մշակման, պահեստավորման և սպասարկման ավանդական ձևերի կողքին հաշվետու տարում նոյեմբերի 28-ից սկսվել է գրքերի թվայնացման գործընթացը: Առ 15.12.2011թ. դրությամբ թվայնացվել է 10 միավոր գիրք, որոնց էջերի ընդհանուր քանակը կազմել է 3422 էջ: Հաջորդ տարում շարունակվելու է գրքերի թվայնացման գործընթացը:

Ապրիլ ամսից անսահմանափակ հնարավորություն ընձեռեց ինտերնետ կայք: Այդ ծառայության տրամադրումը հանդիսացավ ինքնուսուցման, հետևաբար, տեղեկատվական նոր որակի բարձրացման և՛ տեսական, և՛ գործնական երաշխիք:

Համագործակցել ենք այլ գրադարանային ծառայություններ մատուցող կազմակերպությունների հետ՝ գրականության հայտնաբերման, փոխանակման նպատակով:

Ակադեմիան կնքել է պայմանագիր Հայաստանի էլեկտրոնային Գրադարանների Կոնսոցիումի (այսուհետ «ՀԷԳԿ»)-ի հետ՝ դառնալով դրա անդամ: Նշված պայմանագրի շրջանակներում Ակադեմիային կտրամադրվեն ՀԷԳԿ-ի ծառայությունները՝ էլեկտրոնային տեղեկատվական աղբյուրների (տվյալների բազաների) օգտագործում՝ օն-լայն կարգով, պատվերի կարգով կամ էլեկտրոնային կրիչներով (CD, DVD և այլն):

Գրադարանի ծառայություններից օգտվել են Ակադեմիայի մագիստրանտներ, ասպիրանտներ և դասախոսներ (մոտ 450): Գրքերի տացքը (սպասարկում) կազմել է 4200 միավոր:

Համագործակցություն զանգվածային լրատվության միջոցների հետ

Քանակական և որակական վերլուծության են ենթարկվում Ակադեմիային վերաբերող բոլոր հրապարակումները, հեռուստատեսային և ռադիո նյութերը, լրատվական գործակալությունների և ինտերնետային պարբերականների անդրադարձները, տպագիր նյութերը:

Տեսանկարահանվում, լուսանկարահանվում են Ակադեմիայում անցկացված միջոցառումները, կազմակերպվում են Ակադեմիայի ռեկտորի մամուլի ասուլիսները:

Ակադեմիայի կառուցվածքային ստորաբաժանումներին **տեղեկատվա-տեխնոլոգիական (SS)** օժանդակություն ցուցաբերելու նպատակով հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

1. Ակադեմիայի կայքի պատրաստում և գործարկում,
2. լոկալ ցանցի ստեղծում,
3. անվտանգության տեսախցիկների տեղակայում և սպասարկում,
4. որակյալ ինտերնետ կապի ապահովում,
5. Ակադեմիայի տարածքում ինտերնետ կապի ապահովում՝ Wi-Fi կապի միջոցով,
6. ցանցային կառավարման ապահովում,
7. թվային հեռախոսակապի նախագծում,
8. Ակադեմիայի էլեկտրոնային փոստի ստեղծում,
9. Ակադեմիայի տեղեկատվական համակարգի տեխնիկական և ծրագրային սպասարկում,
10. համակարգիչների, կից սարքերի, սերվերների, ծրագրային ապահովում և շահագործում,
11. համակարգիչների, սարքային բաղադրիչների և ծրագրային գործիքների, գործավար համակարգերի տեղակայում և կարգաբերում,
12. սարքա-ծրագրային միջոցների խափանումների ախտորոշում և նորոգում,
13. համակարգիչների և կից սարքերի վերանորոգում,
14. հակավիրուսային պաշտպանության ապահովում,
15. ուսումնական գործընթացների տեղեկատվա-տեխնոլոգիական (SS) ուղեկցություն (կատարվել է ուսումնական գործընթացների համակարգչային սարքա-ծրագրային ապահովման տեխնիկական սպասարկումը և ուղեկցությունը):

2011 թվականի ընթացքում ձեռք են բերվել համակարգիչներ, կոմպլեկտավորման համար համակարգչային պահեստամասեր, որակյալ տպիչ սարքեր,

պատճենահանող սարքեր, պրոյեկտորներ, մոնիտորներ, համակարգչային ցանցի սարքավորումներ:

Աջակցություն Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը

ԼՂՀ քաղաքացիական ծառայության խորհրդի հրավերով 2011 թ. հուլիսի 4-ից-16-ը Ակադեմիայի 2 աշխատակից դասախոսել են ԼՂՀ քաղաքացիական ծառայողների համար: Վերապատրաստումն իրականացվել է ԼՂՀ քաղաքացիական ծառայության խորհրդի որոշումներով հաստատված՝ քաղաքացիական ծառայողների վերապատրաստման ծրագրերին և ժամանակացույցին համապատասխան:

Մեծ կարևորություն է տրվել ԼՂՀ քաղաքացիական ծառայության խորհուրդ-Ակադեմիա գործակցության զարգացման առաջնահերթությունների հստակեցմանն ու դրանց լուծման հայեցակարգային մոտեցումների մշակմանը:

ԼՂՀ քաղաքացիական ծառայության խորհուրդ-Ակադեմիա գործակցության տարբեր ծրագրերի շուրջ ձեռք են բերվել հետագա համագործակցության պայմանավորվածություններ:

«Ճանաչենք, որ սիրենք» ծրագիր

Ակադեմիայի ուսանողները նախաձեռնել են «Ճանաչենք, որ սիրենք» խորագիրը կրող նախագիծ, որի շրջանակներում 2011 թվականի սեպտեմբերի 23-ից-26-ը կազմակերպվել էր այցելություն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ասկերանի շրջանի Վարդաձոր, Նախիջևանիկ և Վարազաբուն գյուղերը: Նշված գյուղերի ընտրությունը պայմանավորված էր նրանով, որ դրանք սահմանամերձ են, Ղարաբաղյան շարժման հետևանքով ամբողջովին այրվել են և ունեն մեկ ընդհանուր միջնակարգ դպրոց:

Այցելության նպատակն էր՝ աջակցել հանրակրթական հաստատությանը, համալրել դպրոցի գրադարանային ֆոնդը, կազմակերպել սեմինար-քննարկումներ հետևյալ թեմաներով՝

1. «Կրթությունը՝ բարեկեցության հասնելու անհրաժեշտ միջոց»,
2. «Հայը՝ հայ մշակույթի կրող»,
3. «Հայրենիք, հայրենասիրություն»,
4. «Մենք ուժեղ ենք միասին» և այլն:

Այցելության համար Ակադեմիայի կառավարման հոգեբանության ամբիոնի կողմից առաջարկվել էին հոգեբանական մեթոդիկաներ (թեստեր), որոնք բացահայտում են աշակերտների մասնագիտական կողմնորոշումը և անձնային որակները: Հոգեբանության մասնագիտության ուսանողների հետ անցկացվել են հատուկ սեմինարներ թեստերի արդյունքները ստանալու և մեկնաբանելու համար:

Կադրային քաղաքականության և անձնակազմի կառավարման ոլորտ

Հաշվետու ժամանակահատվածում կադրային քաղաքականությունում արձանագրվեցին որոշ էական տեղաշարժեր, մասնավորապես, հաստատվել է Ակադեմիայի կառուցվածքը:

Ակադեմիայի կառուցվածքային ստորաբաժանումներն են.

Ամբիոններ

Հանրային կառավարման և հանրային ֆինանսների ամբիոն

Իրավունքի և օրենսդրական գործընթացի ամբիոն

Քաղաքական կառավարման և քաղաքական վերլուծության ամբիոն

Կառավարման հոգեբանության ամբիոն

Լեզուների և ինֆորմացիոն տեխնոլոգիաների ամբիոն

Ուսումնամեթոդական վարչություն

Մագիստրատուրայի բաժին

Պրակտիկայի բաժին

Բաժիններ

Վերապատրաստման, որակավորման բարձրացման և գիտահետազոտական գործունեության բաժին

Տեղեկատվական համակարգերի սպասարկման և զարգացման բաժին

Մասնագիտական կրթության որակի ապահովման բաժին

Ասպիրանտուրայի բաժին

Միջազգային համագործակցության և արտաքին կապերի բաժին

Անձնակազմի կառավարման բաժին

Ընդհանուր բաժին

Գրա-հրատարակչական բաժին

Գիտատեխնիկական գրադարան

Ֆինանսատնտեսական և հաշվապահական հաշվառման վարչություն

Տնտեսական բաժին

Համաձայն հաստատված կառուցվածքի՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կատարվել է Ակադեմիայի աշխատողների փոխադրումը համապատասխան աշխատանքների: Ակադեմիայի ռեկտորի հրամանով հաստատվել է Ակադեմիայի աշխատողների անձնական գործերի վարման կարգը: Հաստատված կարգին համապատասխան՝ իրականացվել է աշխատողների անձնական գործերի վարումը:

Այս ուսումնական տարում դասախոսական անձնակազմը համալրվել է բարձր որակավորում ունեցող նոր դասախոսներով: Դասախոսություններով հանդես են եկել բարձրաստիճան պաշտոնատար անձինք, գիտությունների դոկտորներ, թեկնածուներ, ամբիոնների վարիչներ, կրթության ոլորտի առաջատար մասնագետներ:

ՀՀ սոցիալական ապահովության պետական ծառայության տարածքային կենտրոն են ներկայացվել անհատական հաշիվ բացելու մասին հայտերը՝ անհատական հաշիվ բացելու մասին հայտի ձևին համապատասխան:

Ակադեմիայի Ֆինանսատնտեսական և հաշվապահական հաշվառման վարչության հետ համատեղ իրականացվել են.

1) ՀՀ սոցիալական ապահովության պետական ծառայության տարածքային բաժին ներկայացվող յուրաքանչյուր աշխատող ապահովագրված անձի՝ հաշվարկային ժամանակահատվածի մասին անհատական տվյալների պատրաստում և ներկայացում՝ ընթացիկ հաշվետվության ձևով:

2) ՀՀ սոցիալական ապահովության պետական ծառայության տարածքային բաժին են ներկայացվել անհատական հաշիվ բացելու մասին հայտերը և անհատական հաշվետվության ձևերը՝ անհատական հաշիվ բացելու մասին հայտի և անհատական հաշվետվության ձևերին համապատասխան:

ՀՀ սոցիալական ապահովության պետական ծառայության տարածքային բաժին են ներկայացվել ապահովագրված անձանց՝ մինչև պարտադիր կենսաթոշակային սոցիալական ապահովագրության համակարգում հաշվառելն ընկած ժամանակահատվածում ձեռք բերած ապահովագրական (աշխատանքային) ստաժի հաշվարկման ձևաթուղթը՝ Ձև 5, նոր ընդունված աշխատողների համար):

Փաստաթղթաշրջանառություն

Ապահովվել է փաստաթղթաշրջանառության արդյունավետ կազմակերպումը և Ակադեմիայում գործավարության միասնական կարգի կիրառումը.

հսկողություն է իրականացվել Ակադեմիա մուտք գործած փաստաթղթերի, գրությունների պատասխանների, Ակադեմիայի ռեկտորի հրամանների և հանձնարարականների կատարման նկատմամբ:

Ֆինանսատնտեսական գործունեություն

Ակադեմիայի Ֆինանսատնտեսական և հաշվապահական հաշվառման վարչության կողմից

կազմվել և ՀՀ Նախագահի աշխատակազմ են ներկայացվել՝

- ✓ Ակադեմիայի <<Բյուջետային հիմնարկի պահպանման ծախսերի 2011 թվականի նախահաշիվը>>,
- ✓ Ակադեմիայի <<Բյուջետային հիմնարկի արտաբյուջետային միջոցների գոյացման և տնօրինման 2011թվականի նախահաշիվը>>,
- ✓ Ակադեմիայի 2012-2014 թվականների միջնաժամկետ ծախսային ծրագրերի հայտը,
- ✓ Ակադեմիայի 2012 թվականի բյուջետային ֆինանսավորման հայտը:
Յուրաքանչյուր եռամսյակ ՀՀ Նախագահի աշխատակազմ են ներկայացվել.
- ✓ Ակադեմիայի ամփոփ հաշվապահական հաշվեկշիռը,
- ✓ Ակադեմիայի դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը,
- ✓ Ակադեմիայի ֆինանսատնտեսական գործունեության վերաբերյալ հաշվետվությունը,
- ✓ Ակադեմիայի բյուջետային ծախսերի և բյուջետային պարտքերի մասին հաշվետվությունը,
- ✓ Ակադեմիայի դեբիտորական, կրեդիտորական պարտքերի և պահեստավորված միջոցների մասին հաշվետվությունը,
- ✓ Ակադեմիայի արտաբյուջետային միջոցների գոյացման և տնօրինման մասին հաշվետվությունը:

Այլ հաշվետվություններ՝

✓ ԱԱՀ-ի հաշվարկի և <ԱԱՀ-ի տեղեկանքի> հաշվետվություններ (Արաբկիրի հարկային տեսչություն, ամսական կտրվածքով),

✓ Վիճակագրական հաշվետվություններ (Արաբկիրի վարչական շրջան, ամսական կտրվածքով),

✓ Ակադեմիայի մատուցած ծառայությունների ծավալի մասին> հաշվետվություն,

✓ Ակադեմիայի աշխատողների թվաքանակի և աշխատավարձի մասին> հաշվետվություն,

✓ Եկամտահարկի և սոցիալական ապահովագրության հիմնադրամի հաշվետվություններ (Արաբկիրի հարկային տեսչություն, եռամսյակային կտրվածքով),

✓ <Փոխադրամիջոցների գույքահարկի հաշվարկի> հաշվետվություն (Արաբկիրի վարչական շրջան, եռամսյակային կտրվածքով):

Այլ աշխատանքներ՝

✓ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով «Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա» ՊՈԱԿ-ի կարիքների համար գրասենյակային ապրանքներ, գրենական պիտույքներ, տնտեսական ապրանքներ ձեռքբերելու մրցույթների անցկացման գործընթացների կազմակերպում,

✓ 2011 թվականի տարեկան գույքագրման կազմակերպում և անցկացում,

✓ <ՀՕ-հաշվապահ> հաշվապահական համակարգի ներդրման աշխատանքների իրականացում,

✓ <Քաղաքացիական ծառայություն> շաբաթաթերթի ֆինանսատնտեսական գործունեության վարում (վերահսկվել են նախարարությունների, մարզպետարանների, մշտապես գործող հանձնաժողովների և այլ մարմինների պարտք-պահանջները),

✓ առկա և հեռակա ուսուցման, Քաղաքացիական ծառայողների վերապատրաստման դասավանդողների ժամավճարների հաշվարկում և վճարում,

✓ մագիստրանտների և ասպիրանտների կրթաթոշակների հաշվարկում և վճարում,

✓ վճարովի ուսուցման համակարգում սովորող մագիստրանտների, ասպիրանտների և հայցորդների ուսման վարձի վճարումների և պարտքերի վերահսկողություն և այլն:

Այլ աշխատանքներ

1. Համապատասխան աշխատանքներ են իրականացվում կրթական գործընթացի որակի բարելավման ուղղությամբ:

2. Կիրառվել են ուսումնառության և դասավանդման արդյունավետ մեթոդներ՝ համադրելով դասավանդման դասական եղանակները (դասախոսություններ, գործնական պարապմունքներ և այլն) ժամանակակից ինտերակտիվ մեթոդների հետ:

3. Պատրաստվել է հոգեբանական թեստերի փաթեթ՝ Ակադեմիայի սովորողների հոգեբանական դիմանկարը կազմելու նպատակով:

4. Իրականացվել են նախապատրաստական աշխատանքներ Ակադեմիայում միջազգային կրթական համաժողովների, կլոր սեղանների, սեմինարների կազմակերպման ուղղությամբ:

Պարբերաբար հրավիրվելու են համապատասխան մասնագետներ, գիտնականներ, պետական կառավարման համակարգի ներկայացուցիչներ, ինչպես նաև արտերկրի տարբեր գիտական հաստատություններում դասավանդող դասախոսներ: Մագիստրանտները հնարավորություն կունենան մասնակցելու վերը նշված միջոցառումներին որպես ունկնդիր և որպես զեկուցող կամ քննարկումների մասնակից: Նման հանդիպումները հնարավորություն կտան ձեռք բերել համապատասխան կարողություններ և հմտություններ կառավարման համակարգում, ինչպես նաև կբացահայտեն մրցունակ, ինովացիոն մտածողություն ունեցող մագիստրանտներին:

5. Ակադեմիայի 1 աշխատակից մասնակցել է Միջին մասնագիտական կրթության «Մենեջեր (կազմակերպիչ)» որակավորման աստիճանի 0202 «Սոցիալական ապահովության կազմակերպում» մասնագիտության միջին մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչի նախագծի, դրան կից փաստաթղթերի, ինչպես նաև մոդուլի և ուսումնական պլանի մշակման աշխատանքներին (ՀՀ կրթության և գիտության նախարարության Կրթության ազգային ինստիտուտի հրավերով):

6. Դիմորդներին տրամադրվել է խորհրդատվություն կրթական ծրագրերի, ուսուցման գործընթացի կազմակերպման, դիմորդների առջև ծագած խնդիրների, քննակարգի, թեստերի, Ակադեմիայում կազմակերպվող միջոցառումների և այլնի վերաբերյալ:

7. 2011 թվականի առկա ուսուցման ընդունելության արդյունքում Ակադեմիան համալրվել է **105** ուսանողներով, հեռակա ուսուցման ընդունելության արդյունքում՝ **108** ուսանողներով:

8. 2011 թվականի սեպտեմբերի 10-ին Ակադեմիայի առկա և հեռակա ուսուցման **180** շրջանավարտներ ստացան իրենց դիպլոմները:

9. Առանձնակի կարևորվել է ֆիզիկական դաստիարակության և առողջ ապրելակերպի հիմքերի ստեղծումը Ակադեմիայում (կազմավորվել են համապատասխան սպորտաձևերի խմբակներ):

10. Ձևավորվել է ուսանողական խորհուրդ, մշակվել է իրականացվելիք միջոցառումների ժամանակացույց:

11. Անցկացվել են վերապատրաստման դասընթացներ նոր մոդուլներով:

12. Մասնագիտական կողմնորոշման և մասնագիտության ընտրության հարցում Ակադեմիայի սովորողներին տրամադրվել է խորհրդատվություն՝ պրոֆեսիոգրամաների և պսիխոգրամաների օգնությամբ:

13. Համապատասխան աշխատանքներ են իրականացվել կադրերի ռեզերվի ձևավորման և ռեզերվում Ակադեմիայի շրջանավարտների ընդգրկման ուղղությամբ: Մշակվում է կադրերի կարողությունների և հմտությունների գնահատման նոր մեթոդաբանություն:

14. Հետևողական աշխատանքներ են կատարվում Ակադեմիայի խորհրդանշանի (լոգո) մշակման ուղղությամբ: Հետագայում կարևորվում է տպագրել Ակադեմիայի խորհրդանշանով թղթապանակներ, նոթատետրեր, գրիչներ և քարոզչական այլ նյութեր:

15. Պարբերաբար թարմացվում է Ակադեմիայի պաշտոնական ինտերնետային կայքը՝ www.paara.am հասցեով, կայքում օպերատիվորեն կազմակերպվում է տեղեկատվության տեղադրումը, on-line հետադարձ կապի ապահովումը:

16. Պատրաստվել են հարցաշարեր և իրականացվել է հարցում ուսանողների շրջանում՝ պարզելու թե ուսանողության կարծիքով ինչպիսի խնդիրներ այժմ կան Ակադեմիայում, ինչպես նաև նրանք վերաբերվում դրանց և լուծման ինչ եղանակներ են առաջարկվում:

17. Ակադեմիայում ստեղծվել է հոգեբանական բանավեճային ակումբ, որտեղ կքննարկվեն տարբեր հոգեբանական խնդիրներ: Հոգեբանական բանավեճային ակումբը կնպաստի ձևավորելու և բարձրացնելու բանավեճ վարելու կուլտուրան, լսելու և սեփական կարծիքը հիմնավորելու ունակությունը: Ակումբի առաջին հանդիպումը «Կյանքի իմաստը» թեմայով կայացել է 2011 թվականի դեկտեմբերի 14-ին:

18. Կազմակերպվել են ուսանողների գեղագիտական և հոգևոր դաստիարակությանն ուղղված բազմաբնույթ միջոցառումներ:

19. Համապատասխան աշխատանքներ են իրականացվում կազմակերպարավական, ուսումնամեթոդական փաստաթղթերի ստեղծման, ձևավորման ուղղությամբ, այդ թվում մշակվել են՝

- Ակադեմիայի ուսանողական նպաստների, պետական կրթաթոշակների տրամադրման կարգը՝ առաջադիմության հանդեպ առավել խիստ պահանջներով,
- Ակադեմիայի աշխատողների անձնական գործերի վարման կարգ,
- Ակադեմիայի ներքին կարգապահական կանոններ,
- Ակադեմիայի ամբիոնի վարիչների ընտրության ընթացակարգ,
- Ակադեմիայի որոշ կառուցվածքային ստորաբաժանումների կանոնադրություններ և պաշտոնների անձնագրեր:

20. Ակադեմիայի աշխատողներն ընդգրկվել են քաղաքացիական ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար անցկացվող մրցույթների և քաղաքացիական ծառայողների ատեստավորում անցկացնող՝ համապատասխան մրցութային և ատեստավորման հանձնաժողովների կազմերում:

26 դեկտեմբերի 2011թ.